ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝

Digitally signed by MELKONYAN ARTAK 2312690136
Date: 2023.10.09 14:47:23 GMT+04:00

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Սոթքի միջնակարգ դպրոց

Դասարան՝ II

Դասվարի անուն,ազգանուն՝ Գայանե Վարդանյան

2023- 2024 ուստարի

1. Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)

2-րդ դասարանը բաղկացած է 12 աշակերտից՝ 2 տղա և 10 աղջիկ։

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

✓ աշակերտների մոտ զարգացնել մարդկային լավագույն հատկանիշներ՝ մարդասիրություն,պատասխանատվություն, հայրենասիրություն, ազնվություն, սեր ուսման և աշխատանքի նկատմամբ

✓ մշակել աշխարհաճանաչման և աշխարհընկալման հնարներ

✓ ամենօրյա հսկողություն սահմանել յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ (հաճախում, առաջադիմություն,

կարգապահություն)

✓ հետևել դասարանի և աշակերտների սանիտարահիգենիկ պայմաններին

✓ կազմակերպել ծնողական ժողովներ և ծնողներին մասնակից դարձնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին

3. Հայեցի դաստիարակություն

3. 1 Հոգևոր դաստիարակություն

✓ զրույցի միջոցով աշակերտների մեջ սերմանել սեր ու հարգանք կրոնի, եկեղեցու, արվեստի նկատմամբ

✓ հիշեցնել և բացատրել եկեղեցական տոները

✓ կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը

✓ խթանել երեխաների մեջ հոգևոր արժեքներ՝ անմիջական մասնակցություն ունենալով քրիստոնեական տոներին

✓ կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ

3. 2 Գեղագիտական դաստիարակություն

✓ Զարգացնել գեղագիտական ճաշակ՝ խոսքի, հագնվելու կուլտուրա, սեր բնության, շրջապատի նկատմամբ

✓ լսել աշակերտների կարծիքը գեղեցիկի վերաբերյալ

✓ կազմակերպել այց պատմամշակութային օջախներ, սովորեցնել գնահատել և պահպանել պատմամշակութային կոթողները

✓ կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ

✓ ամրապնդել բնություն-մարդ-արվեստ կապը

3. 3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

✓ հայրենասիրական դաստիարակության մասին կազմակերպել քննարկումներ

✓ դաստիարակել բարի, ազնիվ, հայրենասեր քաղաքացիներ, սերմանել սեր հայրենիքի նկատմամբ

✓ ծանոթացնել հայ ժողովրդի հերոսական անցյալին ու ներկային, նշել ազգային հերոսների այն գծերը, որտեղ արտահայտված է հայրենասիրությունը

✓ նշել մի շարք ֆիդայինների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը

✓ հարգանք ձևավորել հայրենի հողի և երկրի նկատմամբ

✓ բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ

3. 4 Ֆիզիկական դաստիարակություն

✓ տեղյակ լինել յուրաքանչյուր աշակերտի առողջական վիճակի, սպորտային նախասիրությունների մասին

✓ հետևել աշակերտների կեցվածքին և հիգիենային

✓ անցկացնել զրույցներ նվիրված հայազգի մարզիկներին

✓ վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում

✓ ձևավորել ֆիզիկական և հոգեբանական որակների բազմակողմանի զարգացում

3. 5 Աշխատանքային դաստիարակություն

✓ աշակերտներին սովորեցնել հետևել դասարանի մաքրությանը, խնամել ծաղիկները

✓ աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը

✓ տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում

✓ սովորեցնել ցանկացած գործի նկատմամբ ցուցաբերել մեծ պատասխանատվություն

✓ գնահատել յուրաքանչյուր լավ գործ

3. 6 Բնապահպանական դաստիարակություն

✓ զրույցների միջոցով զարգացնել այն գաղափարը, որ Երկիր մոլորակը մեր տունն է և այն ունի խնամքի կարիք

✓ զրույցներ վարել բնապահպանական խնդիրների մասին

✓ ձևավորել հոգատար վերաբերմունք բույսերի և կենդանիների նկատմամբ

✓ կազմակերպել ծառատունկ

4. Դպրոց-ընտանիք կապը

✓ տեղյակ լինել յուրաքանչյուր աշակերտի ընտանեկան, սոցիալական պայմաններին

✓ մշտական կապ պահել ծնողների հետ, անցկացնել ծնողական ժողովներ

✓ երեխաների մեջ ձևավորել այն գաղափարը, որ ընտանիքը համարվում է պետության կորիզը

✓ կազմակերպել ծնողական ժողովներ (առցանց) և նրանց տեղեկացնել երեխաների վարքի և առաջադիմության մասին

✓ մշտապես պահպանել դպրոց-ընտանիք, ուսուցիչ-ծնող կապը

2-րդ դասարան

1-ին կիսամյակ

	Ուսումնադաստիրակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
1	Զրույց ,Գիտելիքի օրե թեմայով	04.09	Դասղեկ
2	Զրույց ,Հաղթանակած Հայաստանե	20.09	Դասղեկ
3	Զրույց ,Համաճարակային կանոնների պահպանումե թեմայով	15.09	Դասղեկ
4	Զրույց ,Դպրոցն իմ երկրորդ տունն էե թեմայով	18.09	Դասղեկ
5	Շնորհավո՛ր տոնդ, սիրելի՛ ուսուցիչ	05.10	Դասղեկ
6	,Մեր առօրյանե թեմայով պատի թերթի լուսընծայում	10.10	Դասղեկ
7	Զրույց- քննարկում ,Էրեբունի-Երևանե թեմայով	17.10	Դասղեկ
8	Հայաստանը՝ մշակույթի կենտրոն	31.10	Դասղեկ
9	Զրույց ,Ջա՛ն աշուն է, աշուն ոսկեզօծ ե զրույց-քննարկում, թեմատիկ անկյան ստեղծում	07.11	Դասղեկ
10	Զրույց ,Ինչպիսի՞ն է աշխարհն իմ պատուհանիցե թեմայով	17.11	Դասղեկ
11	Զրույց ,Քննադատական մտածողության զարգացման կարևորությունըե թեմայով	21.11	Դասղեկ
12	Զրույց ,Ինքնաճանաչում ե թեմայով	28.11	Դասղեկ
13	Զրույց-քննարկում ,Ամանորյա հեքիաթե թեմայով	05.12	Դասղեկ
14	Զրույց ,Իմ սիրած հեքիաթի հերոսըե	12.12	Դասղեկ
15	Զրույց ,Ինչպես են նշում Ամանորը տարբեր երկրներումե	19.12	Դասղեկ

2-րդ կիսամյակ

	Ուսումնադաստիրակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
1	Զրույց «Ինչ պես անցկացրեցի Ամանորը» թեմայով	23.01	դասղեկ
2	Զրույց «Ազնիվ և անկեղծ հարաբերություններ դպրոցում»	30.01	դասղեկ
3	Զրույց նվիրված «Տյառնընդառաջ» տոնին	06.02	դասղեկ
4	Զրույց «Ի՞նչ է պատասխանատվությունը» թեմայով	13.02	դասղեկ
5	Միջոցառում «Գրքի տոն» թեմայով	20.02	դասղեկ
6	Զրույց «Դռները բացեք գարուն է գալիս» թեմայով	27.02	դասղեկ
7	Զրույց «Մայր իմ անուշ ու անգին» բանաստեղծությունների ձոնում	06.03	դասղեկ
8	Զրույց «Հայկական ավանդություններ, որոնցով հպարտանում ենք » զրույց-քննարկում	13.03	դասղեկ
9	Զրույց «Ես բնության մի մասնիկ եմ» կանաչ անկյան ստեղծում	20.03	դասղեկ
10	Զրույց նվիրված «Սուրբ Զատիկի» տոնին	03.04	դասղեկ
11	Զրույց «Ինչպիսի՞ն է աշխարհն իմ պատուհանից» թեմայով	10.04	դասղեկ
12	Զրույց-քննարկում «Ես տանը, դպրոցում և ընկերական շրջապատում» թեմայով	17.04	դասղեկ
13	Զրույց նվիրված «Ապրիլի 24-ին»	24.04	դասղեկ
14	Զրույց «Կենդանիները մեր բարեկամներն են» թեմայով	01.05	դասղեկ
15	Զրույց «Մայիսը հաղթանակների ամիս է» թեմայով	08.05	դասղեկ
16	Զրույց «Ի՞նչն է համարվում գեղեցիկ» թեմայով	15.05	դասղեկ
17	Զրույց «Իմ ձեռքբերումները» թեմայով	22.05	դասղեկ